

Հոդվածը լույս է տեսել՝ *Ասպարեզ* օրաթերթ (Լոս Անջելես) 11 ապրիլի 2002. *Լույս* երկշաբաթագիր (Լոս Անջելես), ապրիլ 2002, No. 5 (146). *Վասն հայության* (Երևան), ապրիլ 16 (#14), 30 (#15), մայիս 14 (#16), 2002. *Օր* (Երևան), մայիս 16, 18, 21 (#19, 20, 21), *Իրավունք* (Երևան) մայիս 31, 2002 (#41/628), *Չարթունք* (Բեյրութ), Հոկտեմբեր 5 & 6, 2002 (Nos. 224/18508, 225/18509). ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել *Աիբի Աժի աի էե (Աժաաի)*, 19 նաի օյաձյ 2002ա.

Հայության համակարգային ճգնաժամի և հայկական պետության ֆիկտիվության մասին

Արմեն Այվազյան

Ա.

Հայաստանի արդի ճգնաժամը

Գաղտնիք չէ՝ Հայաստանը և հայությունն առհասարակ ապրում են համակարգային ճգնաժամ, որն ընդգրկում է քաղաքական, տնտեսական, մշակութային, բարոյական, գաղափարախոսական, սոցիալ-հոգեբանական ոլորտները: Գնաժամից դուրս գալու, ամուր պետություն կառուցելու համար Հայաստանին երկարատև ժամանակաշրջան տրված չէ, այլ այդ հնարավորությունն առկա է լինելու ընդամենը ևս մի քանի տարի, առավելագույնը՝ մեկ տասնամյակ: Այս եզրակացությանն է հանգեցնում թեկուզ միայն ժողովրդագրական աղետալի իրավիճակի թռուցիկ գնումը: 1991-2001 թթ. Հայաստանում (ներառյալ Արցախում) ազգաբնակչության թիվը պակասել է 1-1.5 միլիոնով, ներկայումս կազմելով 2,5 միլիոնից ոչ ավելի մարդ, գուցե և ավելի պակաս (2001 թ. Հայաստանում 3 միլիոն մարդ «հայտնաբերած» ՀՀ վիճակագրական ծառայության հաշվարկը ակնհայտորեն չափազանցված է): Եթե նկատենք, որ 1995-2001 թթ. Հայաստանից տարեկան հեռացել են միջինը 50-60 հազար մարդ, ապա արտագաղթի նույն տեմպերի պահպանման դեպքում (իսկ դրանց պահպանվելու համար բոլոր միտումներն առկա են), 2010 թ. Հայաստանում բնակվելու է շուրջ 1,5-2 միլիոն մարդ, ընդ որում՝ արտագաղթողների մեջ դարձյալ մեծ տոկոս են կազմելու երիտասարդությունը և մասնագիտական բարձր պատրաստություն ունեցողները¹: Հասկանալի է, որ այս

¹ Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը մասնագիտորեն ներկայացնող նյութերից մշեմք հետևյալ կարևոր հոդվածը՝ Աաի էաի էի Ի էժճիյի, “xձձձ 15 էաձ”, *Աիբի Աժի աի էե*, 9 աի ձաէյ 2002 (35/18832).

ծերացած ու պակաս կրթված մարդուժն անընդունակ կլինի պահանջված քանակով համալրելու Հայաստանի անվտանգության հիմնական երաշխիքը հանդիսացող Հայկական բանակը², զարգացնելու Հայաստանի տնտեսությունը, պայքարելու սոցիալական արդարության ողջամիտ պահանջները հարգող՝ բարեկեցիկ ու ժողովրդավարական պետություն կառուցելու համար (իսկ առանց ժողովրդի ճնշման՝ այդպիսի պետություն երբեք չի կառուցվի): Ստացվում է կախարդական շրջան. արտագաղթը ծնում է զարգացման համար անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք իրենց հերթին ծնում են արտագաղթ: Ուստի արտագաղթը պետք է կանգնեցվի ամեն գնով, այլապես այն ոչ թե դադարելու, այլ անդադար շարունակվելու է: Հայաստանի քաղաքական ղեկավարության՝ արտագաղթի վերաբերյալ դրսևորած անտարբերությունն անթույլատրելի և դատապարտելի է: Իսկ բարձրագույն ամբիոններից հնչող լավատեսական հավաստիացումները, թե մի քանի տարուց արտագաղթածները կվերադառնան՝ մանկական երազանքներ են:

Սակայն դրությունն էլ ավելի տագնապալի երանգներով է ուրվագծվում, եթե դիտում ենք այս համակարգային ճգնաժամը՝ Հայաստանի աշխարհառազմավարական բարդագույն իրավիճակի ետնախորքում: Բանն այն է, որ թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի՝ Հայաստանի դեմ սանձազերծելիք հնարավոր պատերազմում՝ տարածքային խոշոր կորուստով ուղեկցված մեր ընդհանենը մեկ ռազմական պարտությունը կարող է նշանակել ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋՈՒ (ժամանակի սղության պատճառով հիշատակեմ միայն բոլորիս ծանոթ մոտավոր սցենարը՝ Ղարաբաղի կորուստը կնշանակի Սյունիքի կորուստ, իսկ Սյունիքի կորուստը՝ Հայաստանի վերացում աշխարհի քարտեզի վրայից):

Հայաստանի ներկա պատմական վիճակը բնորոշելի է ոչ այլ կերպ, քան *լինել-չլինելու ժամանակահատված*: Հետևաբար, ազգի և պետության ապագայով մտահոգված յուրաքանչյուր հայ անհատի համար՝ անձնական, հասարակական, քաղաքական և մասնագիտական բնագավառներում գործելու և կողմնորոշվելու ելակետ պետք է լինի Հայաստանի գոյությանն սպառնացող վտանգի գիտակցումը:

Ճգնաժամի պատմա-քաղաքակրթական և քաղաքական պատճառները

² Տագնապեցնող փաստերը սկսել են հայտնվել նաև պաշտոնական աղբյուրներում՝ Մ. Ա. Սարգսյան, Ջինված ուժերի համալրումը զորակոչով. պրոբլեմներ, մոտեցումներ, լուծումներ. - «Հայկական բանակ», 2001, հմ. 4 (30), էջ 18-25:

Հայաստանի և ողջ հայության ներկա ճգնաժամը բխում է մի շարք արտաքին և ներքին պատճառներից: Մինչդեռ արտաքին պատճառները որոշ չափով լուսաբանվել են, ներքին խորքային պատճառները մնում են դեռևս մութ ու չպարզաբանված: Ուստի ես այսօր կխոսեմ առավելաբար ներքին խնդիրների մասին (սա չի նշանակում, որ արտաքին խնդիրները պակաս կարևոր են):

Նախ՝ ճգնաժամին նպաստած պատմաքաղաքակրթական պատճառների մասին:

1. Ազգային-պետական կառույցների բացակայություն

1375 թ. Կիլիկյան Հայաստանի կործանմամբ՝ հիմնովին ոչնչացվեց հայկական պետության այդ պահին արդեն շուրջ երեքհազարամյա շարունակական ավանդույթներ ունեցող ճյուղավորված համակարգը, ներառյալ՝ թագավորական հաստատությունը, հայկական բանակը և մյուս ազգային-պետական կառույցները (միակ ազգային-պետական կառույցը, որ շարունակեց գոյատևել, հասնելով մինչև մեր օրերը՝ Հայ եկեղեցին էր)³: Հետագա երեք հուժկու ազատագրական ելույթների ժամանակահատվածներում՝ 1722-1735 թթ., 1890-1921 թթ., ինչպես նաև 1988-ից մինչև այժմ ընկած միջոցին՝ վերստեղծված ազգային-պետական կառույցները հայկական քաղաքակրթության հետ իրենց կապը վերագտնելու բավարար ժամանակ չունեցան, այլ հիմնականում փոխառեցին ու նմանակեցին օտար տիրապետող ուժերի համապատասխան հիմնարկներն ու փորձը: Այնինչ հայոց պետականության արդյունավետ կազմակերպումը հնարավոր է հայկական քաղաքակրթության բուն արմատներն ու սկզբունքները ճանաչել-ընկալելու և դրանց համաձայն առաջնորդվելու դեպքում: Ասվածն, իհարկե, չի նշանակում, թե մեզանում անհրաժեշտ է միապետություն հաստատել կամ վերադառնալ հին կացութաձևերին և

³ Օտար տիրապետության ժամանակաշրջանում Հայ եկեղեցին ստիպված իր վրա ստանձնեց ազգի առաջնորդի դերակատարումը: Հայ եկեղեցին մեծ գործ կատարեց՝ պահպանեց ազգային ինքնագիտակցությունը, կազմակերպեց ազգային կրթությունը, հնարավորին չափով առաջ տարավ մշակույթը, ավելին՝ գաղտնի դիվանագիտական գործունեություն ծավալեց Հայաստանը քրիստոնյա մեծ տերությունների օգնությամբ մահմեդական լծից ազատագրելու համար և այդ ուղղությամբ որոշակի գաղտնի նախապատրաստական աշխատանք կատարեց հայկական միջավայրում: Սա առավելագույնն էր, որ Հայ եկեղեցին կարող էր իրականացնել և իրականացրեց թուրք-պարսկական տիրապետության պայմաններում: Իսկ 1720-ական թթ. եկեղեցին հայոց վերածնված զինուժի կառուցողներից էր և այդ զինուժի ոգեշնչողն էր: Բնականաբար, միանություն կլինե՞ր եկեղեցուց ակնկալել ռազմաքաղաքական կառույցներին հատուկ հնտություններ, կարողություններ ու փորձառություն: Մյուս կողմից, 1915 թ. ցեղասպանության և սովետական 70-ամյա տիրապետության ընթացքում Հայաստանյայց եկեղեցին ենթարկվեց այնպիսի ավերիչ հարվածների, որ շատ առումներով կորցրեց իր նախկին ժողովրդայնությունն ու կապը ժողովրդի հետ: Հայ եկեղեցին ևս ինքն իրեն վերագտնելու և ապաքինվելու կարիքն ունի:

օրենսդրությանը: Ամենահին: Խոսքը վերաբերում է ընդամենը հայկական աշխարհընկալման, ազգային բնավորության և ավանդական վարքուբարքի հիման վրա կառուցվելիք ներազգային հարաբերություններին ու պետական մեխանիզմներին: Այս գործը հնարավոր է գլուխ բերել միայն հասարակական գիտություններն ազգային հողի վրա դնելու և դրանց առաջընթաց զարգացումն ապահովելու միջոցով:

Արտերկրում հայկական կառույցների վիճակն է՛լ ավելի ծանր է. վերջին տասնամյակներում՝ միջազգային քաղաքականության մեջ Սառը պատերազմի պարտադրած կանոններով, սփյուռքահայ կազմակերպությունները հայտնվել էին օտար պետությունների հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում, դառնալով նրանց նպատակային ներազդման առարկա: Իբրև հետևանք՝ սփյուռքահայ կառույցների մի զգալի մասի գործունեությունը, հատկապես քաղաքական ասպարեզում, արդյունավետորեն վերահսկվում և ուղղորդվում է օտար ուժերի կողմից: Կարելի է բերել այս փաստը հաստատող բազմաթիվ հին, նոր և նորագույն օրինակներ:

2. Մշակութային ապահայացում. Ոչ միայն Հայաստանից դուրս, այլև Հայաստանի ներսում գոյություն ունեն մշակութապես ապահայացված՝ ուժացած հայ զանգվածներ: Եթե արտերկրում ուժացումը բնականոն և անխուսափելի երևույթ է ու առանձին բացատրության կարիք չունի, ապա Հայաստանում այդպիսի հայերի տարօրինակ գոյությունը պայմանավորված է հետևյալ երեք հիմնական հանգամանքով.

ա) Խորհրդային Հայաստանն ազգային արժեքներին ու նպատակներին խորթ, գաղափարապես գաղութացված կվազի-պետական վարչական միավոր էր, հզորագույն կայսրության մի մասնիկը՝ իր մշակութապես հետզհետե ռուսականացող կուսակցական և մտավորական վերնախավերով:

բ) Խորհրդային Հայաստանում գործող ռուսական դպրոցների տասնյակ հազարավոր շրջանավարտների գերակշիռ մեծամասնության համար հայոց լեզուն հասանելի է միայն խոսակցական մակարդակի վրա, իսկ հայոց պատմությունը, մշակույթն ու գրականությունն այդպես էլ մնացել են անծանոթ տարածք՝ terra incognita: Թեև հայկական դպրոցներում հայոց լեզվի դասավանդումը վատ չէր կազմակերպված, սակայն այստեղ էլ ամբողջ կրթության նպատակը ոչ թե հայոց պատմության ու մշակույթի արժանավոր ժառանգ ու տեր դաստիարակելն էր, այլ

սովետական կայսրության համար՝ «վերագրային» կոմունիստական արժեքներով տոգորված հավատարիմ քաղաքացի կերտելը.

գ) արտերկրից՝ հատկապես նախկին ԽՍՀՄ տարածքից տասնյակ հազարավոր արդեն իսկ մշակութապես ուժացած՝ հիմնականում ռուսացած հայերի ներգաղթը խորհրդային Հայաստան: Այս հայերը (որ առավելաբար քաղաքաբնակ էին ու կրթված) մեծ նպաստ բերեցին Հայաստանի տնտեսական բարեկարգմանն ու զարգացմանը: Սակայն ո՛չ իրենք, ո՛չ էլ իրենց սերունդները մշակութապես չհայացվեցին, շարունակեցին ռուսական դպրոցներ հաճախել և ռուսերենը մայրենի լեզու համարել:

Հայության զանգվածային ուժացման երևույթն ընդգրկում է նախ և առաջ լեզվական վիճակը: Վերջին տասնամյակի մեծ արտագաղթի հետևանքով՝ հայոց լեզվի կրողների թիվը կտրուկ ընկել է. տասնյակ հազարավոր հայ երեխաներ ու պատանիներ, որ այլապես իրենց կրթությունը պետք է ստանային Հայաստանում, աշխատեին ու ստեղծագործեին հայերեն, ծնողների հետ արտագաղթեցին և ուսումնառությունը շարունակեցին օտար լեզուներով: Այժմ էլ բուն Հայաստանում տասնյակ հազարավոր հայեր չեն տիրապետում հայոց լեզվին, ըստ այդմ էլ՝ անհաղորդ են մնում ազգային մշակույթին, մշակութապես ռուսացված են: Վերջերս էլ հուժկու թափով սկսվել է մի նոր աղետալի գործընթաց՝ մշակութային ամերիկանացումը, որ առավել հայտնի է իբրև գլոբալացում: Իսկ արտերկրի օտար միջավայրի պայմաններում, դրությունը, բնականաբար, անհամեմատ ծանր է:

Հայոց լեզվի ճգնաժամը խորացվում է նաև արհեստականապես. սփյուռքում տիրապետողը դասական ուղղագրությունն է, իսկ Հայաստանում՝ խորհրդային տարիներին ընդունվածը: Տարրական տրամաբանությունը պահանջում է միասնական ուղղագրության շուտափույթ ընդունում հայության բոլոր հատվածների համար: Այս հարցում պահանջվում է պետության եռանդուն միջամտություն, սակայն, միասնական ուղղագրության հաստատման շուրջ գործնական քննարկումներ չեն տարվում: Ուղղագրական շիլաշփոթը ձեռնտու է հայությունն անմիաբան տեսնել ցանկացող ուժերին, որոնք, ըստ երևույթին, ամնասն չեն խնդիրը չլուծված վիճակում պահելու մեջ:

Կրթական ոլորտը ևս խոր ճգնաժամի մեջ է. կաշառակերությունը թափանցել է դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների մեջ: Մասնագետների

պատրաստումը կատարվում է առանց հաշվի առնելու երկրի կարիքները: Շատ արագ ընթանում է ուղեղների արտահոսքը⁴:

3. 20-րդ դարում հայության կրած մարդկային կորուստները

Հասկանալու համար հայությանն այսօր հետապնդող խնդիրները, անհրաժեշտ է նաև պարզորեն պատկերացնել վերջին հարյուրամյակում մեզ պատուհասած աղետների ահավոր արդյունքները: Այժմ անդրադառնանք այդ աղետների պատճառած միայն մարդկային կորուստներին, որոնք ազդել են ոչ միայն մեր ազգի քանակի, այլև նրա հավաքական որակի վրա (մասնավորապես՝ հայ զանգվածների մեջ արմատավորելով այսպես կոչված «վերապրելու հոգեբանությունը»՝ անհատի համար իր և ընտանիքի անձնական շահի ամեն ինչից վեր դասումը):

1894թ. մինչև 1922թ.՝ չորս փուլով իրագործված հայկական ցեղասպանությունը բնաջնջեց հայկական քաղաքակրթությունը իր բնիկ տարածքի մեծ մասից ու խլեց ավելի քան 2.000.000 հայերի կյանք (շուրջ 300.000 հայ ոչնչացվեց 1894-96 թթ., 30.000՝ 1909 թ., 1.5 միլիոն՝ 1915-16 թթ., շուրջ 300.000՝ 1918-1922 թթ.):

1920-1921 թթ. Արևելյան Հայաստանի կենտրոնական մասում հռչակված Հայկական խորհրդային փոքրիկ հանրապետությունը, վայելելով հարաբերական խաղաղության և կայունության 70-ամյա մի շրջան՝ կարողացավ արձանագրել տնտեսական-մշակութային լուրջ առաջընթաց: Բայց ի հավելումն ցեղասպանության պատճառած մարդկային կորուստների, հայերը մեծ զոհեր տվեցին նաև խորհրդային Հայաստանում. 1920-21 թթ. ոչնչացվեց անկախության շրջանում ազգային ոգով կոփված գրեթե ողջ հայ սպայակազմը, իսկ 1930-ական թթ. բոլշևիկյան խավարամոլության զոհ գնաց հայ մտավորականության ծաղիկը՝ հազարավոր շարքային քաղաքացիների հետ միասին: 1941-1945 թթ. պատերազմին մասնակցություն բերած շուրջ 600,000 հայորդիներից զոհվեց շուրջ 300 հազարը: Պատկերացնելու համար, թե սա ինչ ահավոր թիվ է փոքրաքանակ հայ ազգի համար, բավական է ասել, որ երկրորդ համաշխարհային պատերազմում Ամերիկայի Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան տվել են գրեթե ճիշտ նույնքան սպանված՝ համապատասխանաբար 291.557 ու 357.116 զինվոր:

1949 թ. Հայաստանից կազմակերպված բռնագաղթը հազարավոր նոր զոհերի պատճառ դարձավ:

⁴ Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահության գիտությունից և ժողովրդից կտրված լինելու և զուտ բյուրոկրատական կառույցի վերածված լինելու մասին

Կայուն ու տնտեսական զարգացման աննախադեպ բարենպաստ ժամանակահատված էին 1954-ից մինչև 1988 թ. ընկած տարիները: Սակայն սկսած 1988 թ.՝ Հայաստանի այս վերջին բեկորում հայ ազգի գոյատևումը դարձյալ հարցականի տակ առնվեց. 1988 թ. Սպիտակի երկրաշարժը խլեց 25-30 հազար կյանք և ամբողջությամբ ավերեց Հայաստանի մոտ մեկ երրորդը, ներառյալ Երևանից հետո ամենամեծ հայկական քաղաքները՝ Գյումրին ու Վանաձորը: Դրան հետևած Ղարաբաղյան պատերազմում զոհվեցին ևս շուրջ մեկ տասնյակ հազար հայեր⁵: Այս ամենին ուղեկցած արտագաղթը, որը կանգ չի առել ու շարունակվում է, Հայաստանից արդեն տարել է 1-1.5 միլիոն մարդ:

Շատ բնական ու հասկանալի է, որ այսպիսի աներևակայելի մարդկային կորուստները պետք է ազդեին նաև ազգի ընդհանուր մտավոր ու բարոյական ներուժի վրա: Սակայն հենց այս նույն ցավալի փաստերը մեզ պետք է նաև ուժ ու հավատ ներշնչեն, որովհետև, թերևս ոչ մի ազգ չէր դիմանա այսպիսի հարվածների և բառիս բուն իմաստով կանհայտանար: Ուրեմն մեր ազգն ունի նաև անօրինակ տոկունություն և ապրելու կամք, որը և պետք է շուտափույթ գործի դնել՝ ի հեճուկս պարտվողականություն, երբեմն էլ՝ անկախությունից կամովին հրաժարում քարոզող բոլոր ուժերի և տրամադրությունների:

4. Սփյուռքի անկազմակերպվածությունը. Արտերկրի հայ համայնքներն ու ավանդական կազմակերպությունները ցայսօր չեն կարողացել ձևավորել համասփյուռքյան ներկայացուցչական կառույց՝ իր վերկուսակցական ճյուղավորված տեղական մարմիններով: Իրականում՝ միայն այդպիսի կառույցը կարող է ըստ արժանվույն կազմակերպել սփյուռքահայ կյանքը, այդ թվում՝ տեղերում անցկացնել հայերի մարդահամար, ազգային որոշակի տուրք սահմանելու միջոցով ստեղծել կայուն ու վերահսկելի բյուջե՝ և՛ համայնքի, և՛ Հայաստանի զանազան կարիքները հոգալու համար, ինչպես նաև միջազգային ատյաններում ներկայացնել Հայոց ցեղասպանության արդյունքում առաջացած քաղաքական, իրավական, ֆինանսական և այլ խնդիրները: Եթե պարբերաբար կազմակերպվող Հայաստան-սփյուռք

տե՛ս Անյի՛ն Նաճի՛ն ձե՛ռքի՛ն, “Ա՛նո՛ւնի՛ն և՛ ձե՛ռքի՛ն է՛ն և՛ ձե՛ռքի՛ն է՛ն և՛ ձե՛ռքի՛ն է՛ն”, *Ա՛նո՛ւնի՛ն Ա՛նո՛ւնի՛ն*, 30 և՛ ձե՛ռքի՛ն 2002 թ. (44/18841).

⁵ Միայն արցախցիները (շուրջ 150.000 բնակիչ) տվեցին 613 զոհ: Եթե այս թվերը տոկոսային հարաբերությամբ արտահայտվեն Վիետնամի պատերազմի օրոք ԱՄՆ բնակչության (220 միլիոն) վրա, ապա սպանվածների թիվը կկազմի գրեթե 1 միլիոն: Հիշեցնենք, որ Վիետնամում զոհվել էր 55,000 ամերիկացի զինվոր: Այս հաշվարկը կատարել է Լ. Չորբաջյանը, սակայն նրա տեղեկությունը՝ 1993-1994 թթ. ձմռանը արցախցիների տված 700 սպանվածների մասին

համաժողովները հերթական ցուցամուկություն չեն, այլ իսկապես նպատակ ունեն դրական արդյունքների հասնել, ապա այդ համաժողովների քննարկելիք հիմնական խնդիրը պետք է լինի համասփյուռքյան ներկայացուցչական կառույցի ստեղծումը: Այլապես՝ այդ համաժողովները զբաղվելու են ժամավաճառությամբ և նորանոր հիասթափությունների տեղիք են տալու:

5. Հայության ներուժի թուլության մյուս պատճառը՝ **ազգային անվտանգության հարցերում ինքնուրույն մտածելու մեր անկարողությունն է**, որն արդյունք է միջազգային հարաբերությունների ռազմավարական խնդիրներում՝ Հայաստանի, ինչպես նաև սփյուռքի ղեկավար շրջանակների անպատրաստվածության և խիստ թերի գիտելիքների: Փաստորեն, արտաքին քաղաքականության հարցերում հայ ինքնուրույն միտքը դեռևս ձևավորված չէ: Օտար, հատկապես, ամերիկյան ռազմավարական մտքի գերիշխանությունը հասցրել է մինչև այնտեղ, որ մեզ հաջողությամբ պարտադրել են մեր ազգային անվտանգության մասին մտածել իրենց մտակաղապարներով: *Մինչդեռ մեզանից լավ ոչ ոք չի կարող վերլուծել և որոշել մեր անվտանգության պահանջները:* Անվտանգության բնագավառում ինքնուրույն մտածելու մեր անկարողությունը՝ հայոց պետականությանը սպառնացող ամենամեծ վտանգներից է:

6. Իսկ այժմ առավել մանրամասնորեն խոսենք հայության արդի ճգնաժամի ամենակարևոր պատճառի մասին, որ է՝ ազգային պետության *դե ֆակտո* բացակայությունը:

Բ.

Հայկական պետության ֆիկցիան և դրա հետևանքները

Ներկա ծանր կացությունից դուրս գալու համար անհրաժեշտ է նախ և առաջ ունենալ բարձրագույն տիպի ազգային կազմակերպություն, այն է՝ ազգային կայացած պետություն: Ցավոք, հայ ժողովուրդը, ինչպես ստորև վեց կետով մանրամասնելու են, առայժմ չունի այդպիսի կազմակերպություն:

Կայացած պետություն ասելով, հասկանում ենք.

ամստույզ է. - տե՛ս Levon Chorbajian, Patric Donabedian & Claude Mutafian, *The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabakh* (London & New Jersey: Zed Books, 1994), pp. 41, 48:

(1) պետություն, որն ապահովել է իր *ներքին* անվտանգությունը, այսինքն՝ իր ենթակայության տակ գտնվող ուժային կառույցների միջոցով կարողացել է սաստել (նաև տարանջատվել) կազմակերպված հանցագործ այն ուժերից, որոնք առավել խոշոր չափերով թալանում են պետական ու հանրային ունեցվածքը:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Վերջին տասնամյակի ընթացքում *ներքին* կազմակերպված հանցագործ ուժերը կատարել են պետական ու հանրային ունեցվածքի վիթխարի չափերի հասնող թալան և դրան հարակից բազմաթիվ խոշոր հանցագործություններ: Այս հանցագործությունները, մնալով մեծավ մասամբ չբացահայտված և անպատիժ, հասարակության մեջ ծնել են խոր հուսալքվածություն, անօգնականության զգացում, առաջացրել են անպատժելիության մթնոլորտ, հանցածին լայն միջավայր, օրինախախտ տնտեսական գործունեության մեջ մասնագիտացող՝ կոռումպացված քաղաքական վերնախավ: Այս այլանդակ երևույթները՝ յուրաքանչյուրն իր հերթին, առաջացրել են ծայրաստիճան վտանգավոր հասարակական միջավայր, այդ թվում՝ պետության և ազգի շահերի հանդեպ անտարբերություն, ազգային արժեքների և մշակույթի զանգվածային մերժում և ուրացում, կործանարար չափերի հասնող արտագաղթ:

(2) *Կայացած պետություն* ասելով, հասկանում ենք պետություն, որը, հենվելով իր վերը նշված ներքին անվտանգության վրա, կենտրոնացնում է իր ռեսուրսներն արտաքին ուժերի ոտնձգությունները կանխատեսելու, դրանք կանխարգելելու և դիմագրավելու, ինչպես նաև տնտեսական, բնապահպանական և այլ սպառնալիքները հաղթահարելու վրա:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Ներքին անվտանգության բացակայությունն անհնար է դարձրել պետական մարմինների, ինչպես նաև քաղաքական-հասարակական առողջ ուժերի ուշադրության բևեռումը՝ արտաքին սպառնալիքների վրա: Հայաստանի տեղեկատվական, բարոյա-հոգեբանական ու տնտեսական ոլորտների դեմ դրսից կազմակերպված քայքայիչ գործողությունները ոչ միայն դուրս են մնում պետական մարմինների ուշադրությունից, այլև երբեմն իրականացվում են հենց նույն պետական մարմինների միջոցով:

(3) *Կայացած պետություն* ասելով, հասկանում ենք պետություն, որի կառույցները՝ տիրապետելով անհրաժեշտ պրոֆեսիոնալ գիտելիքին, կատարում են օրենքով իրենց վերապահված գործառույթները:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի Հանրապետության պետական կառույցներն իրենք կայացած չեն, որովհետև կադրային քաղաքականությունը հետևողականորեն (գուցե և կանխամտածված կերպով) վերածվել է մի զավեշտի, որն արդեն տաս տարի է մերժում և բացառում է գիտելիքն ու մասնագիտական էթիկան: Ավելին՝ ՀՀ պետական կառույցները շատ հաճախ կատարում են իրենց օրենսդրորեն վերապահված գործի ճիշտ հակառակը, այսպես՝ իրավապահ մարմիններն իրականում իրավախախտ մարմիններ են, բնապահպանության նախարարությունը՝ անխնա ծառահատումների կազմակերպիչ, տեղական կառավարման մարմինները՝ իրենց տարածքում եղած պատմամշակութային հուշարձանների ոչնչացման կազմակերպիչ, արտգործնախարարությունը՝ օտար պետությունների շահերը պաշտպանող անձանց աշխատավայր, կրթության նախարարությունը՝ հայոց լեզվի պետական կարգավիճակը չհարգող և ոտնահարող ուժ (ցանկության դեպքում՝ այս ցանկը կարելի է լրացնել ու մանրամասնել):

ՀՀ ազգային անվտանգության համար անմիջականորեն պատասխանատու պետական ուժային կառույցների մեջ թերևս միակ մասնակիորեն կայացած մարմինը, իր բոլոր մեծ ու փոքր թերություններով հանդերձ՝ նորաստեղծ Հայկական բանակն է: Սա մասամբ գալիս է նրանից, որ Հայկական բանակի գործունեության օրակարգն ինքնըստինքյան և պարզորեն համապատասխանում է ազգային-պետական բուն շահերին ու նպատակներին: Սակայն, Հայկական բանակը դեռևս նույնպես հեռու է ազգային արմատներից, կառուցված է հայ զինվորի հոգեբանությանը խորթ ու անհարիր սովետական բանակի մոդելով⁶: Օբյեկտիվորեն ի վիճակի չլինելով միայնակ կատարելու պետական մյուս մարմիններին վերապահված գործառնությունները, Հայկական բանակն արդեն իսկ հայտնվել է բավական լուրջ մեկուսացածության մեջ: Հայկական բանակի ներքին ռեսուրսներն ակնհայտորեն անբավարար են հետագա անհրաժեշտ զարգացումն ապահովելու համար:

(4) *Կայացած պետություն* ասելով, հասկանում ենք պետություն, որի ազգաբնակչության առնվազն կեսը վստահում է իշխանություններին, իսկ մեծամասնությունը ենթարկվում է հաստատված օրենքներին:

⁶ Այս մասին տե՛ս «Մենք զինվոր ազգ ենք (հարցազրույց պատմաբան-քաղաքագետ Ա. Այվազյանի հետ)». - *Հայ զինվոր* շաբաթաթերթ, 29 դեկտեմբերի 2001-5 հունվարի 2002, թիվ 51 (408):

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը, մեղմ ասած, չի վստահում իշխանություններին և, վերջիններից օրինակ վերցնելով, չի հարգում երկրի օրենքները:

(5) *Կայացած պետություն* ասելով, հասկանում ենք պետություն, որի տնտեսությունն իր ազգաբնակչության մեծ մասին ապահովում է աշխատանքով, իսկ պետական ծառայողին՝ այնպիսի աշխատավարձով, որը բավարար է նրա ընտանիքի արժանապատիվ գոյության համար:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ-ն աշխարհի ամենաաղքատ պետություններից է, որը չի կարողանում (և, ըստ երևույթին, առանձնապես չի էլ ձգտում) գոնե պետական ծառայողներին ապահովել տանելի՝ թեկուզ կենսաբանական նվազագույն պահանջները բավարարող աշխատավարձերով, էլ չասած նոսրացած ազգաբնակչությանն աշխատանքով ապահովելու մասին: Պաշտոնական տվյալների համաձայն՝ ՀՀ ազգաբնակչության 56 տոկոսն ապրում է աղքատության մեջ, իսկ իրականում աղքատների թիվն ավելի բարձր է:

(6) *Կայացած պետություն* ասելով, հասկանում ենք պետություն, որի գործունեության հիմքում ընկած է իր՝ որպես քաղաքական և պատմամշակութային առանձին օրգանիզմի, գոյությունը հավերժացնելու ձգտումը:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ-ը հստակ չի սահմանել ո՛չ իր նպատակներն ու շահերը, ո՛չ էլ դրանց առաջնահերթության սանդղակը: Գոյություն չունի ո՛չ ազգային անվտանգության հայեցակարգ, ո՛չ տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիր⁷: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ պատշաճ մտահոգություն ու շահագրգռվածություն չի ցուցաբերում՝ իր անվտանգությունն ու անկախությունն արտաքին սպառնալիքներից պաշտպանելու գործում:

Հայկական իրականության պարադոքսը

⁷ Տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիր ունենալու անհրաժեշտության վերաբերյալ տե՛ս, օրինակ, *Í eðeða Çaði áyí*, “Í áí áðí àeí ààeí ùé àí eáí ñðí ÷í ùé ñòðàòàè÷-áñèèé ì èáí”, *Áí eí ñ Áðí áí eè*, 16 áí ðàeý 2002 á. (38/18835).

Այսպիսով Չայաստանի Չանրապետությունը դեռևս կայացած պետություն չէ: Ավելին՝ արդի հայկական իրականության մեծագույն պարադոքսն այն է, որ ի հեճուկս այն փաստի, որ այսօր գոյություն ունեն հայկական զինված ուժեր, որոնք ինքնուրույնաբար վերահսկում են Արևելյան Չայաստանի մի մասը և տարածաշրջանային առումով ռազմաքաղաքական լուրջ գործոն են, և ի հեճուկս մեկ ուրիշ փաստի, որ *դե յուրե* գոյություն ունի միջազգայնորեն ճանաչված Չայաստանի Չանրապետությունը, այդուհանդերձ՝ Չայաստանի Չանրապետությունը դժվար է բնութագրել ոչ միայն իբրև կայացած պետություն, այլև իբրև *հայկական պետություն*, որովհետև ՉՉ-ն բացարձակ անտարբերություն է ցուցաբերում և՛ իր ազգաբնակչության, և՛ առավել ևս՝ ամբողջ հայ ազգի շահերի հանդեպ: Ասվածը փաստելու համար բավարար է հիշատակել ընդամենը երկու փաստ. ա) ՉՉ պետական *հակակառույցների* անարդար գործունեությունը ամեն օր Չայաստանից դուրս է մղում հարյուրավոր հայերի, և բ) ՉՉ-ն արհամարհում է ազգային հարուստ մշակույթն ու արժեքները և նույնիսկ իբրև նպատակ չի հռչակում հայկական քաղաքակրթության ինքնօրինակ զարգացումը, որ պետք է իրականացվի համաշխարհային առաջադեմ փորձի օգտագործմամբ, սակայն՝ սեփական հոգևոր և մշակութային արժեքների հիման վրա:

Չայաստանի Չանրապետության՝ հայկական ֆիկտիվ պետություն լինելը խիստ հակասության մեջ է Չայաստան երկրի (որն այս պահին ընդգրկում է հայկական զինված ուժերի վերահսկած ամբողջ տարածքը), նրա սահմանների մեջ ապրող հայ ժողովրդի ու աշխարհասփյուռ հայության գոյատևման պահանջների հետ: Այսօրվա աշխարհառազմավարական իրողություններն այնպիսին են, որ Չայաստանի Չանրապետության ֆիկտիվ կենսագործունեությունն այլևս սպառնում է մեկընդմիջտ ընդհատել հայկական հինգհազարամյա քաղաքակրթությունը:

Չայկական պետության գոյության այս ֆիկցիայի՝ հայության վրա թողած վնասաբեր ազդեցություններից նշենք երկուսը.

ա) անհատն ու հասարակությունն թմրեցվում են՝ ազգային շահն այլևս ուշադրության և պաշտպանության չեն արժանացնում, թյուրիմացաբար կարծելով, թե արդեն կա, գոյություն ունի մի հայկական պետություն, որը և կոչված է զօրուզիչեր զբաղվելու այդպիսի հարցերով.

բ) հստակ չգիտակցելով Չայաստանի Չանրապետության չկայացածությունը իբրև պետություն ու առավել ևս իբրև հայկական պետություն, սակայն ամեն օր տեսնելով այդ կվազի-պետական միավորի ավերիչ գործունեությունը, հայերը զանգվածաբար հիասթափվում են բուն անկախության գաղափարի, հայոց

հավաքական կարողությունների և անգամ հայկական մշակույթի մեջ՝ այստեղից բխող վտանգավոր բոլոր հետևանքներով հանդերձ:

Ինչևէ, պատմական այս փուլում հայ ազգի (նախ և առաջ՝ նրա պետական ու քաղաքական կառույցների) համար առաջին խնդիրն է. օգտվելով Հայաստանի Հանրապետության թեկուզ ֆիկտիվ, սակայն *դե յուրե* գոյությունից՝ քանի դեռ չափազանց ուշ չէ՝ ծնել դեռևս գոյություն չունեցող *դե ֆակտո* հայկական պետությունը:

Ասվածի մեջ առավել հստակություն մտցնելու և տարակարծություններից խուսափելու համար, թվարկեմ նաև այսօր Հայաստանի և հայության ունեցած հիմնական նպատակները, որոնց, կարծում եմ, համամիտ է ինքն իրեն հայ համարող որևէ անհատ.

1. Հայաստանի (ներառյալ Ղարաբաղի) ազգային անվտանգության ամրապնդում բոլոր ուղղություններով, ուժերով և միջոցներով:
2. Հայաստանում օրենքի ու սոցիալական արդարության վրա հիմնված հասարակության կառուցում:
3. Աշխատանքի և բարեկեցության ապահովում՝ Հայաստանի ժողովրդի համար:
4. Հայկական ինքնօրինակ քաղաքակրթության վերընթաց զարգացում՝ համաշխարհային առաջադեմ փորձի օգտագործմամբ, սակայն սեփական հինգհազարամյա հոգևոր և մշակութային արժեքների հիմքի վրա:
5. Հայոց ցեղասպանության հետևանքների աստիճանական վերացմանն ուղղված ծրագրված, նպատակասլաց ու հետևողական գործողություններ, որոնք կարող են ձգվել տասնամյակներ և հարյուրամյակներ:

Հայկական պետության համար վերոհիշյալ հինգ դրույթներից յուրաքանչյուրի պաշտպանությունը հիմնարար պահանջ է, սակայն, կրկնեմ, որ, ցավոք, այսօր չկա հայկական այդ պետությունը⁸:

⁸ Մեր տխուր իրավիճակի համար ժողովրդին պատասխանատու ճանաչելն ու մեղադրելը (ինչպես սիրում են անել որոշ քաղաքական գործիչներ, ասելով, թե իբր «յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է ունենալ այն, ինչ ունի»)՝ անարդար է: Իրականում՝ ժողովուրդը զոհն է, իսկ ամեն ինչի համար պատասխանատուն ու մեղավորը հայկական ֆիկտիվ պետությունն է՝ իր զանազան և բազմաթիվ հակակառույցներով: Աստված չանի, որ հետագայում մեր սերունդները սփռվեն աշխարհով մեկ ու ստիպված լինեն Հայաստանի Հանրապետությունն անվանել ոչ թե սոսկ *ֆիկտիվ հայկական պետություն*, այլ բնութագրեն այն որպես *հակահայկական պետություն*, որն օտար ուժերի կողմից կոչված էր կատարելու Հայաստանի գերեզմանափորի դերը:

Գ.

Հայաստանի զիջումների սահմանը

Այսօր Հայաստանը մեծ կախվածության մեջ է միջազգային ուժերից, հատկապես Ռուսաստանից և ԱՄՆ-ից: Ռուսաստանից կախվածությունն առավելապես ռազմավարական անվտանգության բնագավառում է, իսկ ԱՄՆ-ից՝ տնտեսական ոլորտում: Այս երկու տերությունների ազդեցությունը Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության վրա հաճախ ընդունում է սովորական թելադրանքի բնույթ: «Քանու հետ համընթաց քայլելու» և ԱՄՆ ու Ռուսաստանի շահերը ոչ մի դեպքում չտոնահարելու Հայաստանի պես փոքր, երրորդական պետության ներկա քաղաքականությունը հասկանալի է, սակայն գոյություն ունի երկու սահմանագիծ, որից այն կողմ Հայաստանի անվտանգության կենսականորեն կարևոր շահերը կարող են անդամալիորեն վնասվել, այդ սահմանագծերն են.

1) եթե Հայաստանին ստիպեն զգալիորեն իջեցնել իր ռազմական անվտանգության ներկա (առանց այն էլ ոչ շատ բարձր) մակարդակը.

2) եթե Հայաստանին և հայերին ստիպեն առկա քաղաքական կոնյունկտուրային հարմարեցնել, մոռացության մատնել կամ մերժել սեփական պատմությունը և այդ պատմության ընթացքում ստեղծված ազգային հարուստ արժեքները:

Ռազմական անվտանգության մակարդակի իջեցումը (որ կարող է տեղի ունենալ, եթե Ադրբեջանին զիջենք որոշ տարածքներ՝ առանց դիմացը ռազմավարական համարժեք զիջումներ և փոխհատուցում ստանալու)⁹ սպառնում է Հայաստանի բուն

⁹ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող բանակցություններում հայկական կողմի համար անփոփոխ պետք է լինեն հետևյալ երեք դիրքորոշումները.

1. Ազատագրված տարածքները ոչ այլ ինչ են, քան անվտանգության երաշխիքներ: Բնականաբար, տարածքային զիջումները հոգուտ Ադրբեջանի կտրուկ իջեցնելու են հայկական կողմի ռազմավարական անվտանգության մակարդակը:

2. Հետևաբար, եթե երբևէ հայկական կողմը տարածքային զիջում կատարի հոգուտ Ադրբեջանի, ապա այդ զիջումը պետք է փոխհատուցվի նույն *անվտանգության*, այլ ոչ թե որևէ ուրիշ (իրավական, բարոյական, տնտեսական) բնագավառում: Այսինքն՝ իր հնարավոր տարածքային զիջումի դիմաց հայկական կողմն Ադրբեջանից պետք է ստանա ոչ-տարածքային համարժեք ռազմավարական զիջումներ, ինչպես նաև վերահսկելի եւ ամրակուռ երաշխիքներ:

3. Ղարաբաղյան հարցի լուծման նկատմամբ Հայաստանի որդեգրելիք գլխավոր սկզբունքը պետք է լինի հետևյալ պարզ ձևակերպումը՝ **հակամարտության վերջնական կարգավորումը չպետք է հանգեցնի Հայաստանի և Ղարաբաղի ռազմավարական անվտանգության մակարդակի իջեցմանը:** Այսուհանդերձ՝ թուրք-ադրբեջանական դաշինքի անզիջողականության և միջազգային արդի անկայուն իրադրության պայմաններում որևէ տարածքային զիջում Ադրբեջանին արդարացված չի կարող:

գոյությանը, մինչդեռ պատմական ճշմարտության կեղծումը (և ոչ միայն ցեղասպանության հարցում)՝ բաժանարար նոր և անհաղթահարելի գիծ անցկացնելով հայկական միջավայրում՝ ընդունակ է վերջնականապես քայքայելու ազգը: Այս երկու կետում էլ զիջողականությունն անթույլատրելի է: Ուստի անհրաժեշտ է բոլորին՝ և՛ դաշնակիցներին, և՛ չեզոք միջնորդներին, և՛ հակառակորդներին, բացատրել, թե որտեղ են ավարտվում Հայաստանի՝ զիջումներ կատարելու հնարավորությունները:

Հայաստանում և արտերկրում շարունակվում է հայերի մեջ հայրենասիրական զգացմունքները թուլացնելու ուղղությամբ տարվող նպատակասլաց աշխատանքը: Հայրենասիրությունը ցուցադրվում է որպես հետամնաց, ատավիստական երևույթ, որն իբր վաղուց սպառել է իրեն ու վերացել ժամանակակից զարգացած պետություններում: Իհարկե այս կեղծիքն արևմտյան մեկնաբաններն ու վերլուծաբանները մատուցում են այն պետություններին ու ժողովուրդներին, որոնց հզորացումը և ուժեղ պետականությունն իրենց շահերին չեն համապատասխանում: Մինչդեռ, օրինակ, Թուրքիայի ազգայնամոլությունը և փոքրամասնությունների նկատմամբ վարվող ֆաշիստական քաղաքականությունը համարժեք գնահատականի և վերաբերմունքի ցարդ չեն արժանացել: Իսկ մենք պետք է համկանանք, որ որևէ պետության ներքին կայունությունն ու կազմակերպվածությունը պայմանավորող գործոնների շարքում իր կարևորությամբ առանձնանում է այդ պետության բնակչության՝ ազգային-պետական միասնական շահերի գիտակցմանը հասած լինելու աստիճանը և ըստ այդմ առաջնորդվելու պատրաստվածությունը, այլ կերպ ասած՝ «կիրառական» հայրենասիրությունը:

Ի մի բերենք: Այսօր ազգի և պետության ապագայով մտահոգված յուրաքանչյուր հայ պետք է իր քաղաքական դիրքորոշումները ճշտի, նկատի ունենալով հետևյալ ռազմավարական հանգամանքները.

1. Թեև Հայաստանի Հանրապետությունը *դե յուրե* միջազգայնորեն ճանաչված է իբրև անկախ պետություն, այն *դե ֆակտո* չկայացած, ֆիկտիվ պետություն է: Ավելին՝ այսօրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի հայկական պետականության բովանդակություն:
2. Ե՛վ Հայաստանի պետական, և՛ սփյուռքի ավանդական կառույցները, մեծավ մասամբ, նվիրված չեն ազգային հիմնախնդիրների լուծմանը, օտար վերահսկողության տակ են, չունեն զարգացման երկարաժամկետ

ծրագիր և ռազմավարություն: Միանգամայն բնական է, որ ազգի բարոյապես մաքուր և մտավորապես կարող ուժերն այդ կառույցներից դուրս են մնում, տեղը զիջելով գաղափարակայնությունից զուրկ միջակություններին, միայն անձնական շահ ճանաչող չինովնիկներին, հաճախ էլ՝ կիսագրագետ հանցագործ տարրերին: Հասկանալի է նաև, որ այդ կառույցները խեղդում են նախաձեռնությունն ու նորարարական միտքը, առաջ չեն քաշում իրենց ներսում իսկ եղած սակավաթիվ բանիմաց և ընդունակ կադրերին, չափից ավելի փակ են, արդեն իսկ փտած են կամ դատապարտված են փտելուն:

3. Հետևաբար, Հայաստանի և հայության ամենակարևոր խնդիրը՝ ազգային և պետական շահերն արտահայտող կառույցների ստեղծումն է: Այլ կերպ ասած՝ *Հայաստանում դրված է պետական մարմինների և բուն պետության կառուցման և դրանց հայկականացման խնդիրը, իսկ արտերկրում՝ համայնքային ներկայացուցչական բոլոր կառույցները ի մի բերող, օտար ուժերի թելադրանքին դիմակայելու ընդունակ՝ հայկական գերագույն համասփյուռքյան վերկուսակցական մարմնի ձևավորման հրամայականը:*